



**III. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7. Պրոֆեսորի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա

համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում:

8. Դոցենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և (կամ) դոցենտի գիտական կոչում:

9. Դասախոսի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա բուհական աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ և (կամ) համապատասխան մասնագիտության գծով ավարտած լինի ասպիրանտուրա՝ հանձնելով թեկնածուական որակավորման քննությունները:

10. Ասիստենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը պետք է ունենա առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճան:

11. Հավակնորդը դիմումին կից պարտադիր ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- 1) անձնական թերթիկ՝ լուսանկարով,
- 2) անձնագրի պատճենը,
- 3) սոցիալական քարտի պատճենը,
- 4) 4 լուսանկար (3x4 չափսի),
- 5) աշխատանքային գրքույկի քաղվածքը,
- 6) ինքնակենսագրությունը,
- 7) գիտական աշխատությունների ցանկը,
- 8) վավերացված դիպլոմի պատճենը,
- 9) վավերացված դիպլոմի միջուկի պատճենը,
- 10) վավերացված գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 11) վավերացված գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը: